Արփինե Հովակիմյան, *պ.գ.թ., ասիստենտ*
ՀՊՏ Եղեգնաձորի մասնաճյուղ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԶԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր – բարձրագույն կրթություն, մարդկային կապիտալ, կրթական համակարգ, տարածքային համաչափ զարգացում, աղքատության հաղթահարում, գիտահետազոտական կենտրոններ, աշխատաշուկա, ազգային համալսարաններ:

Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը:

Ցանկացած ժամանակակից հասարակության նորմալ գործունեությունն անհնար է դառնում առանց կրթական համակարգի ամբողջականության: Կրթությունը վաղուց դարձել է տնտեսական և քաղաքական համակարգի առաջնային գործոններից մեկը, ցանկացած պետության քաղաքականության կարևորագույն գործիք: Կրթական համակարգը ունի մեծ, եթե ոչ որոշիչ ազդեցություն հասարակության զարգացման վրա, քանզի այն իր մեջ ներառում է այլ հասարակական համակարգեր, ինչպիսիք են՝ գիտությունը, տնտեսությունը, մշակույթը: Կրթության մակարդակը բնորոշում է ոչ միայն երկրի հասարակության զարգացման օրինաչափությունները, այլ նաև առանձին անհատների գործունեությունը: Պատահական չէ, որ երկրների կենսամակարդակները բնութագրող մարդկային ներուժի զարգացման համաթիվը հաշվարկելիս կարևոր ցուցանիշ է համարվում կրթության մակարդակը և տևողությունը:

Կրթությունը կապված է հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ: Ի համալրում նրան, որ տնտեսության մյուս ոլորտները ստեղծում են նյութական և հոգևոր բարիքներ կամ մատուցում ծառայություններ, կրթական համակարգը դաստիարակում է մարդուն՝ ազդելով նրա գիտական, մշակութային և հոգևոր զարգացման վրա: Այլ կերպ ասած, կրթությունը կոչված է զարգացնել և բազմապատկել մարդկային կապիտալը և ձևավորել ապագա հասարակության անդամներ:

Հայաստանում, ինչպես և բազմաթիվ այլ երկրներում, բարձրագույն կրթության ծառայությունների մատչելիությունը անհավասար է: Բարձրագույն կրթություն ստանալու ցածր եկամուտ ունեցող ընտանիքներից ու գյուղական բնակավայրերից ուսանողների հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան առավել բարեկեցիկ ու քաղաքաբնակ ընտանիքների երեխաներինը:

Պետականության կայացման ճանապարհին մեր հանրապետությունը ստիպված է լուծել մի շարք սոցիալական խնդիրներ՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների կայուն բարեկեցությունը: Առավել առաջնային է աղքատության հաղթահարումը, որում կրթությունը դիտարկվում է հիմնական գերակայությունների շարքում: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները՝ այս բնագավառում ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնումը սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման հեռանկարն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր, տարածքային զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման համատեքստում:

Այս առումով հատկապես կարևորվում է կրթության դերը մարզերում: Պետական մակարդակով բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա դրված է գիտելիքը ստեղծողի, պահպանողի և տարածողի պարտականություններ, իսկ մարզերի կտրվածքով ԲՈՒՀ-երը հանդես են գալիս որպես կազմակերպություններ, որոնք մեծ ներդրում են ունենում մարզի զարգացման բնագավառում, որպես կառույցներ, որոնք մատուցում են ծառայություններ, ինչը հարստացնում է մարզի սոցիալական, մշակութային և տնտեսական կյանքը: Շատ հաճախ մարզի հետագա զարգացումը պայմանավորված է նրանով, թե ինչպիսի ծառայություններ է մատուցում բարձրագույն ուսումնական հաստատությունը(տես՝ գծապատկեր 1)[1]:

---

[1] Տես՝ Милова Ю.Ю, «Роль высших учебных заведений в развитии регионов», Актуальные вопросы экономоческих наук: материалы III междунар.науч. конф.(г.Уфа, июнь 2014г.)-Уфа: 2014.-с. 9-11.



Գծապատկեր 1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունները

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները.

- Ծառայությունների մատուցում կրթության ոլորտում: Այդպիսի ծառայությունների շարքին կարելի է դասել նոր մասնագիտությունների ստեղծումը, որակավորման բարձրացման կուրսերի բացումը, կրթության անընդհատության իրականացումը:
- Ծառայությունների մատուցում գիտաարտադրական և նորամուծական ոլորտում: Դրանց շարքին դասվում են՝ ֆունդամետալ, հետազոտությունները, ուսանողական գիտական հետազոտությունները, նորարարական նախագծումը, նոր տեխնոլոգիաների ստեղծումը:
- Ծառայություններ՝ տեղեկատվության ոլորտում: Այդ թվում՝ գիտական հետազոտությունների, գիտական հոդվածների, ուսումնական ծրագրերի տպագրում, համացանցի զարգացում և տարածում:
- Ծառայություններ՝ միջազգային կապերի ընդլայնման ոլորտում: Դրանք ներառում են՝ աջակցություն օտարերկրյա ուսանողներին, ԲՈՒՀ-երի մասնակցություն միջազգային ծրագրերին և նախագծերին և միջազգային պաշտոնա-

կան պատվիրակությունների ընդունելության կազմակերպում:

- Ծառայություններ՝ սոցիալ-մշակութային ոլորտում: Հասարակության սոցիալ-մշակութային զարգացում:

ԲՈՒՀ-երի և մարզային կառույցների միջև համագործակցության հիմական ուղղությունները հետևյալներն են. Գիտատեխնիկական քաղաքականություն, տարածքի համալիր զարգացում, կրթական քաղաքականություն, գիտարատադրական քաղաքականություն, քաղաքականություն զբաղվածության ոլորտում (տես գծապատկեր 2):

Աշխարհի շատ երկրներում գործատուներն ակտիվորեն համագործակցում են բուհերի հետ, եւ վերջիններս հանդես են գալիս իբրեւ գիտահետազոտական կենտրոններ: Հայկական բուհերի դեպքում այս համագործակցությունը բավական սահմանափակ է:



Գծապատկեր 2. ԲՈՒՀ-երի և մարզային կառույցների միջև համագործակցության հիմնական ուղղությունները

Ժամանակակից պայմաններում որակյալ մասնագետների նկատմամբ պահանջարկը հանգեցնում է ԲՈՒՀ-երի և գործատուների միջև բնականոն համագործակցության ծավալման: Վերջիններիս միջև համագործակցությունը թույլ է տալիս գործատուներին ակտիվ մասնակցություն ունենալ կրթական ծրագրերի ստեղծման աշխատանքներին, հնարավորություն է տալիս ուսանողների մասնագիտացման պրոցեսում օգտագործել իր տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները՝ ներգրավելով նրանց տարբեր ծրագրերում և կազմակերպելով նրանց համար արտադրական և գիտահետազոտական պրակտիկաներ: Այս առումով մարզերում ԲՈՒՀ-երի համար հավասարազոր գործընկերներ կարող են հանդիսանալ ոչ միայն ձեռնարկատետերը, այլ նաև պետական և

տեղական ինքնակառավարման մարմինները, տարբեր տիպի մասնագիտական հաստատությունները (տես՝ գծապատկեր 3)[2]:

Բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև համապատասխանության պակասը նույնպես լուրջ մտահոգության պատճառ է Հայաստանում: Չնայած ներկայումս զբաղվածության ու շրջանավարտների աշխատանքի հեռանկարները փոքր-ինչ բարելավվել են, շրջանավարտների մասնագիտացման ու աշխատաշուկայի պահանջների միջև կառուցվածքային անհապատասխանությունն ակնհայտ է:

Աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ կապի ապահովման համատեքստում, որպես բնակչության, հատկապես՝ երիտասարդների զբաղվածության հեռանկարային երաշխիք, մեծ նշանակություն ունի մասնագիտական կողմնորոշումը, որի հիմնական նպատակն է դեռահասներին և երիտասարդներին ուղղորդել դեպի աշխատաշուկա՝ բացահայտելով նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները և աջակցել աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը: Մասնագիտական կողմնորոշման համակարգի նպատակն ու խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է ամբողջ կյանքի ընթաց-

[2] Տես՝ Максимова Е.Н., "Механизм взаимодействия высших учебных заведений и промышленных предприятий региона", «Экономика и Право», № 3-2012, с.40.

քում տարիքային տարբեր խմբերում և սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց համար մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական զարգացման հնարավորությունների ապահովումը՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշները, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը:

Ներկայիս կրթական քաղաքականության նպատակներից են համայնքային, մարզային և հանրապետական մակարդակներում որոշումներ կայացնելու գործընթացին երիտասարդների մասնակցության խթանումը, երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, հոգեպես և ֆիզիկապես առողջ, կրթված և հայրենասեր երիտասարդություն ունենալը:

Ուսումնական հաստատությունների ներգրավումը և մասնակցությունը համայնքային գործողությանը կնպաստի այդ պայմանների ստեղծմանը՝ զարգացնելով ակտիվ համագործակցությունը հաստատությունների և համայնքների միջև: Այս պայմաններում գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքներ հաղորդելն ու ուսուցանելն է, այլև արագ որոշումներ կայացնելու, ակտիվ հաղորդակցվելու և ողջ կյանքի ընթացքում սովորելու ունակ քաղաքացի ձևավորելը:

Այս առումով ուսանել է զարգացած երկրների փորձը, մասնավորապես Ֆինլանդիայի բարձրագույն կրթության համակարգում ոլորտի զարգացումը ընթանում է կարևորագույն ուղղվածությամբ, որը կարելի է նկարագրել որպես «դեպի շրջաններ» համալսարանների տարածում: Կրթության համար հավասար իրավունքներ և պայմաններ ստեղծելու հիմնահարցը առաջ էր քաշվում տարածաշրջանային լոբբիստական խմբավորումների կողմից (ներառյալ՝ իրենց առանձին շրջանները ներկայացնող խորհրդարանի անդամները, տարածաշրջանային համայնքների ներկայացուցիչները, ինչպես նաև արդյունաբերական և ձեռնարկատիրական ընկերությունները): Արդյունքում, սկսած 1960 թվականից, Ֆինլանդիայի բոլոր շրջաններին թույլ տրվեց հիմնադրել իրենց սեփական համալսարանը: Համալսարանների հիմնադրումը կրում էր ոչ միայն խորհրդանշական բնույթ, այլև ուներ մշակութային և տնտեսական կարևորություն տվյալ տարածաշրջանի զարգացման համար: Չնայած զգալիորեն ավելացան պետության ծախսերը, սակայն դրանք տեղաբաշխվեցին մեծ թվով հաստատությունների, այլ ոչ թե կենտրոնացվեցին փոքրաթիվ ազգային համալսարաններում:

АННОТАЦИЯ

Арпине Овакимян, *к.э.н., ассистент*
АГЭУ Ехегнадзорский филял

РОЛЬ ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ В КОНТЕКСТЕ РАЗВИТИИ РЕГИОНА

В современных условиях особое значение имеет развитие системы образования, прежде всего вузы, которые готовят дипломированных специалистов, ориентированных на потребности общества и личности. Роль университета в регионе отнюдь не ограничивается подготовкой специалистов. Можно рассматривать университеты как социальное явление, характеризующееся двойственностью проявления своих форм. С одной стороны, университеты продолжают оставаться производственными организациями, целевой функцией которых государство определило производство образовательных продуктов (научных и образовательных товаров и услуг). С другой стороны, университеты все более превращаются в субъект социального и культурного развития региона, выступая центром научно-производственно-образовательного потенциала региона, центром непрерывного образования, обеспечивая качество предоставления образовательных услуг.

ANNOTATION

Arpine Hovakimyan, *PhD*
ASUE Yegegnadzor branch

THE ROLE OF UNIVERSITIES IN THE CONTEXT OF DEVELOPMENT OF THE REGION

In modern conditions the development of educational system plays a great role first of all in higher educational institutions which prepare degreed specialists oriented on the needs of society and personality. In the region the role of the university is not only limited with the preparation of specialists. We can consider universities as social phenomenon characterized by duality manifestations of its forms. From the one hand universities continue to stay as productive organizations which target functions the government has separated as the production of educational products (scientific and educational products and services.)From the other hand universities has transformed more into a subject of social and cultural development of the region representing as the center of scientific production and the educational potential of the region, the center of continual education providing quality of educational services.